

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 22-Ի N 125 ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

_____ի 2019 թվականի N _____-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2001 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 22-Ի N 125 ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության
կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի
փետրվարի 22-ի «Հայաստանի Հանրապետության պետական
կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու
օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքի վարձակալության,
ինչպես նաև մինչև մեկ տարի ժամկետով պետական ոչ առևտրային
կազմակերպություններին ամրացված գույքի վարձակալության
տրամադրման գործընթացը կանոնակարգելու մասին» N 125 որոշման.
- 3-րդ և 4-րդ կետերում, հավելված 1-ի 10-րդ կետում և հավելված 5-ի
2-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերությունում «սննդի
կազմակերպման համար տրամադրվող տարածքների» բառերից հետո
լրացնել «, պետական և համայնքային ոչ առևտրային
կազմակերպություններին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարության կողմից ֆինանսավորվող մարզաձևերի
ֆեդերացիաներին կրթական և մարզական միջոցառումների
կազմակերպման համար տրամադրվող մարզադահլիճների» բառերով.
- 3-րդ և 4-րդ կետերը, հավելված 1-ի 10-րդ կետը և հավելված 5-ի 2-րդ
կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերությունը լրացնել նոր
պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Մարզաձևերի ֆեդերացիաները, որոնք չեն ֆինանսավորվում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից, կրթական և մարզական միջոցառումներ կազմակերպելու համար տրամադրվող մարզադահլիճների վարձակալության համար սույն կետով սահմանված բացառությունից կարող են օգտվել միայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության համաձայնության դեպքում:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: